

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ

Մարզպետն իր լիազորությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառների և ծրագրերի գծով նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

2017 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

Ֆինանսավորման ոլորտը	2017թ. Ճշտված բյուջեով նախատեսված (հազ. դրամ)	2017թ. փաստացի ֆինանսավորված է (հազ.դրամ)	Կատարումը (%)
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ	452252,7	447831,3	99%
Կրթություն, այդ թվում			
Հանրակրթական ուսուցում	4542218,2	4542218,2	100 %
Հատուկ կրթություն	77792,5	77792,5	100%
Ներառական կրթություն	23093,9	21473,9	92%
Նախադպրոցական կրթություն	56851,5	56851,5	100 %
Արտադպրոցական դաստիարակություն	24134,0	24134,0	100 %
Մանկավարժների և դպր. երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	1700,0	1700,0	100%
Ատեստավորման միջոցով տարրակարգ ստացած ուսուցիչներին	2575,6	2073,7	80%
Սոցիալապես անապահով երեխաների դասագրքերի փոխհատուցում	17,0	0	0%
Մշակույթ, այդ թվում			
Մշակույթային միջոցառումներ	3278,2	3278,2	100%
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	21605,6	21605,6	100%
Բնակարանային շինարարություն	68829,9	23003,7	33%

Ավտոճանապարհների պահպանում և շահագործում, ձմեռային պահպանում	127815,0	127815,0	100%
Այլընտրանքային աշխատանքային ծառայություն	1200,0	1200,0	100%
Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում	221616,0	210132,3	94%
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ	491592,7	473434,0	96%
Դրուագիա	2428020,6	2426385,0	99 %

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ՀՀ պետական բյուջեով 2017թ. մարզի 72 համայնքներին նախատեսված 2428020.6 հազ. դրամի դիմաց դրուագիաները հատկացվել են 2426385.0 հազ. դրամ:

Համայնքների բյուջեների կատարման ընթացքն ըստ հարկատեսակների հետևյալն է.

	Հողի հարկ	Գույքահարկ	Պետական տուրք	Գույքի վարձակալություն	Տեղական տուրք	Այլ մուտքեր	Դրուագիա
Նախատեսված	365437,2	496471,7	21229,0	130614,8	41999,3	37918,9	2428020,6
Փաստացի	357726,4	506005,0	21947,6	118409,2	33886,5	34548,2	2426385,0

Դրուագիաները հիմնականում նպատակաուղղվել են տեղական ինքնակառավարման մարմինների՝ ՀՀ օրենսդրությամբ վերապահված պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացմանը:

Համայնքների բյուջեները ընդհանուր եկամուտների մասով կատարվել են 99,1%-ով, իսկ սեփական եկամուտները՝ 98,0%-ով: Բնակչության մեկ շնչի հաշվարկով համայնքների սեփական եկամուտները կազմում են 9,6 հազ.դրամ, իսկ աճը 2016 թվականի համեմատ կազմում է 1,7 հազ.դրամ:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 1237073,2 հազ.դրամ ընդհանուր ծավալում հողի հարկի տեսակարար կշիռը կազմում է 28,9%, գույքահարկինը՝ 40.9%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 9,6%:

	Ցուցանիշներ		
Համայնքների եկամուտները,	Նախատեսված		

այդ թվում	ընդամենը եկամուտներ	2016թ.	3596130,1
		2017թ.	3740865,8
Համայնքների ընդամենը եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը %/		ընդամենը
		2016թ.	99,8
		2017թ.	99,1
			ընդամենը
Սեփական եկամուտների կատարման տոկոսը	մարզի միջինը %/		ընդամենը
		2016թ.	100
		2017թ.	98
			ընդամենը

2017թ. սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել մարզի 114 (այժմ 72) համայնքների բյուջեների ամփոփը: Կազմվել և գլխադասային մարմիններին են ներկայացվել 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2018թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը: Պարբերաբար իրականացվել են աշխատանքներ մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող ծրագրերի գծով ծախսերի կատարման նախահաշիվների կազմման և դրանց ֆինանսավորման, հաշվետվությունների ներկայացման, համայնքների բյուջեների կատարման, աշխատավարձերի վճարման համայնքների բյուջեներին տրվող հատկացումների նպատակային օգտագործման ուղղությամբ: Գանձապետական հաշիվների էլեկտրոնային կառավարման «Բլիենթերեժի» ծրագրային համակարգով կատարվել են մարզպետարանի միջոցով իրականացվող ծրագրերի գծով առկա ծախսերի ֆինանսավորման և վճարման, կնքված պայմանագրերի հաշվառման ամենօրյա գործառույթները:

2017թ. մարզպետարանի կողմից իրականացվել է մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների սոցիալական փաթեթի շահառուների հաշվառումը , նախահաշիվների և հաշվետվությունների ընդունումը :

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գնման գործընթացներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար 2017թ.-ին կազմակերպվել է 31 գնման ընթացակարգ, որոնց արդյունքում կնքված բոլոր 213 պայմանագրերը հաշվառվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 2017թ. մրցույթների արդյունքում ընդհանուր առմամբ տնտեսել է 118913,4 հազ. դրամ, որից 95492,9 հազ. դրամը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին իրականացված գնումներից և 23420,5 հազ. դրամ ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից:

Ծրագրի գործառնական դասակարգիչ	Գնման ընթացակարգերի քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի արդյունքում կնքված պայմանագրերի քանակը (հատ)	Գնման ընթացակարգերի արդյունքում խնայված գումարներ (հազար դրամ)
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	21	27	23 420,5
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ	10	185	95 492,9
Ընդամենը	31	213	118 913,4